ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/96» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 7-ը նոյեմբերի 2017թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-րդ դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/96» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/96» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում Ֆ/Ա Գոռ Պետրոսյանի կողմից հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը լիարժեք չի՝ բացակայում են տեխնիկական բնութագրի վերջին նախադասությունը՝ այսինքն «Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ», ինչպես նաև ծանոթության բաժնում նշված պահանջները:

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և մասնակցին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված անհամապատասխանությունները: 08.11.2017թ. նիստը շարունակվել է և գնահատող հանձնաժողովը ներկայացրած շտկված անհամապատասխանությունները գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն չունի:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 08.11.2017թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց Ֆ/Ա Գոռ Պետրոսյանի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/96» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Քանի որ ընթացակարգին մասնակցել է 1 կազմակերպություն, ուստի անգործության ժամկետ չի կիրառվել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/96» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/96» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան

08.11.2017թ.